31 օգոստոսի 2015 թվականի N 998 - Ն

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 24-Ի N 305-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

---

Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի մարտի 24-ի «Պետական կառավարչական հիմնարկներին ամրացված՝ բնակելի տարածքների նվիրատվության կարգը հաստատելու մասին» N 305-Ն որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետով հաստատված ցանկում կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները՝

1) ուժը կորցրած ճանաչել 11-րդ, 33-րդ, 45-րդ, 60-րդ, 62-րդ, 66-րդ, 69-րդ, 74-76-րդ, 78-րդ, 81-րդ, 86-րդ, 95-րդ և 96-րդ կետերը.

2) ցանկի 51-րդ կետի 2-րդ սյունակում «Ուսուցչի տուն» բառերը փոխարինել «Դպրոցի նախկին շենք» բառերով.

3) ցանկը 53-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 53.1-ին, 53.2-րդ, 53.3-րդ, 53.4-րդ, 53.5-րդ, 53.6-րդ, 53.7-րդ, 53.8-րդ և 53.9-րդ կետերով.

«

| | | |
|---|---|---|
| 53.1. | Ուսուցչի տուն | ՀՀ Լոռու մարզ, գյուղ Ազարակ |

| | | |
|---|---|---|
| 53.2. | Փայտյա տնակ (դպրոցի նախկին մասնաշենք) | ՀՀ Լոռու մարզ, գյուղ Գարգառ, Վ. Բալայանի անվան միջնակարգ դպրոց |
| 53.3. | Ուսուցչի տուն | ՀՀ Լոռու մարզ, գյուղ Լորուտ, 2-րդ փող., հ. 2 |
| 53.4. | Ուսուցչի տուն | ՀՀ Լոռու մարզ, գյուղ Սվերդլով, 2-րդ փող., 11 |
| 53.5. | Ուսուցչի տուն | ՀՀ Լոռու մարզ, Ուրասարի համայնք |
| 53.6. | Ուսուցչի տուն | ՀՀ Լոռու մարզ, գյուղ Ուռուտ, 3-րդ նրբ., շենք 2/2 |
| 53.7. | Ուսուցչի տուն | ՀՀ Արագածոտնի մարզ, գյուղ Ուջան |
| 53.8. | Ուսուցչի տուն | ՀՀ Արագածոտնի մարզ, գյուղ Հարթավան |
| 53.9. | Ուսուցչի տուն | ՀՀ Արագածոտնի մարզ, գյուղ Լեռնապար |

».

4) ցանկից հանել «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարան» բառերը.

5) ցանկը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 97-րդ կետով.

«

| | | |
|---|---|---|
| 97. | Ուսուցչի տուն | ՀՀ Արագածոտնի մարզ, Գեղաձոր համայնք, 6-րդ փող., 1-ին փակուղի, N 1 բնակելի տուն |

»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ — Հ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ